

4090



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



« 08 » 04 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 04 4 - 24

Ձեռնարկողը՝

«ՍՄԱՌ» ՍՊԸ

Գեղարքունիքի մարզ, Մարտունի, գ. Ծովասար, 1-ին փողոց, տուն 1

Գործունեությունը՝ Մարտունու բազալտի հանքավայրի արդյունահանման
աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվեկտրություն

Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 044 - 24

«08» 04 2024 թ.

**Գեղարքունիքի մարզի Մարտունու բազալտի հանքավայրի արդյունահանման
աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման
հաշվետվություն**

Նախաձեռնող՝ «ՍՄԱՌ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն (ՇՄԱԳ),
նախագծային փաստաթղթեր
Կատեգորիան՝ «Ա»
Տեղադրման վայրը՝ Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, բն.Գեղիովիտ

Ներածական մաս. Գեղարքունիքի մարզի Մարտունու բազալտի հանքավայրում «ՍՄԱՌ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) նախատեսում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանում: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (ընդունված՝ 2014 թվականի հունիսի 21-ին) 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ. ենթակետի՝ վերը նշված նախատեսվող գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության՝ որպես «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Մարտունու բազալտի հանքավայրը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի խոշորացված համայնքի Գեղիովիտ բնակավայրի վարչական սահմաններում՝ Մարտունի քաղաքից 12 կմ և Գեղիովիտ բնակավայրից 950 մ հեռավորությունների վրա: Հայցվող տարածքից 885 մ դեպի արևելք անցնում է Մարտունի-Եղեգնաձոր ավտոմայրուղին:

Օրոգրաֆիկ տեսանկյունից շրջանը տիպիկ լեռնային է՝ խիստ կտրտված ռելիեֆով, հարավից սահմանափակվում է Վարդենիսի լեռնաշղթայով: Հանքավայրի բացարձակ բարձրությունները տատանվում են 2140-2190 մ նիշերի սահմաններում: Տարածքի աշխարհագրական կոորդինատներն են՝ 40°05'25"-հյուսիսային լայնության, 45°16'30" - արևելյան երկայնության:

Ընկերության կողմից հայցվող տարածքից շուրջ 0,15 հա-ը շահագործվել է նախկին ԽՍՀՄ ժամանակաշրջանից: Հայցվող տարածքում կամ հարևանությամբ ձևավորված լցակույտեր առկա չեն: Հանքավայրի բազալտները ծածկված են վերին գետային և լճային ալյուվիալ-դելյուվիալ բերվածքներով, որոնք ներկայացված են գլաբարա-խճաքարային և ավազակավային նյութերով, որոնց հզորությունը տատանվում է 2,5-8 մ սահմաններում: Բազալտի հաստվածքի միջին հզորությունը հանքավայրում կազմում է 23,35 մ, մակաբացման ապարների՝ 1,4մ: Ընկերության կողմից բացահանքի հայցվող տարածքը կազմում է 2,78 հա, ծառայման ժամկետը՝ 17 տարի:



Հայցվող պաշարների ծայրակետային կորդինատները ARM WGS – 84 (ARMREF 02) համակարգով հետևյալն են.

1.	X=4439470.3510	Y=8522863.3387
2.	X=4439594.0000	Y=8522888.0000
3.	X=4439593.4888	Y=8523091.7293
4.	X=4439573.6467	Y=8523126.9953
5.	X=4439503.9928	Y=8523122.4784
6.	X=4439484.2343	Y=8522958.6026
7.	X=4439439.5903	Y=8522938.3569

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու բազալտների հանքավայրի պաշարները հաստատվել են ՀԽՍՀ ՊՏՀ-ի 29.04.1967 թ.-ի N 162 արձանագրությամբ՝ 1967 թվականի հունվարի 1-ի դրությամբ ըստ A, B և C₁ կարգերի, համապատասխանաբար՝ 845.0հազ.մ³, 2687.0հազ.մ³ և 3005.0հազ.մ³ քանակներով: Բազալտները կարող են օգտագործվել հիմքերի և ցոկոլային հարկերի շարի համար, ինչպես նաև որպես խիճ գրունտային ճանապարհների ծածկի համար: Լեռնային զանգվածից պիտանի բլոկների ելքի որոշման նպատակով իրականացվել է փորձնական հանույթ: Բլոկի ելքը լեռնային ապարներից կազմում է 34%: Բազալտները իրենց ֆիզիկամեխանիկական հատկություններով ապահովում են «ԳՕՍՍ 4001-58 “Камни строительные из известняков и туфов” և РТУ Арм ССР 100-62 “Камни строительные из туфов и базальтов” պահանջներին և կարող են օգտագործվել որպես պատքար:

Հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են հանքավայրի շահագործման համար, քանի որ համաձայն ՇՄԱԳ-ի տեղեկատվության գրունտային ջրերը բացակայում են: Հանքարդյունահանման աշխատանքները նախատեսված է կատարել մեխանիկական եղանակով՝ էքսկավատորի հենքի վրա տեղադրված հիդրավլիկ մուրճով: Հանքավայրի մշակման համար ընտրվել է ընդլայնական, միակողմանի խորացմամբ մշակման համակարգ՝ մակաբացման ապարները ժամանակավոր արտաքին լցակույտեր տեղափոխումով:

Բացահանքի բացումը նախատեսված է հարավ-արևելյան մասի՝ 2155.0 մ բարձրության նիշից: Նախատեսված է հանքավայրի հյուսիս արևմտյան մասից ավտոճանապարհի անցում՝ 2115.0 մ բարձրության նիշից մինչև բացահանքի 2155.0 մ բարձրության նիշ ունեցող հորիզոն (L=580 մ, b=7մ - V= 4935 մ³):

Նախագծված բացահանքը վերջնական դիրքում բնութագրվում է հետևյալ պարամետրերով՝

- Ամենամեծ երկարությունը – 250 մ,
- Ամենամեծ լայնությունը – 130 մ,
- Բացահանքի առավելագույն խորությունը – 50.0 մ,
- Օգտակար հանածոյի միջին հզորությունը – 22,5 մ,
- Օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարներն ըստ C₁ կարգի՝ - 625500 մ,
- Արդյունահանվող պաշարների քանակը՝ - 504930 մ³,
- Մակաբացման ապարների միջին հզորությունը-1.34 մ, որից հողաբնական ապարներ՝ 0,5 մ:
- Մակաբացման ապարների քանակը – 37250 մ³, որից հողաբնական ջրեր 13650 մ³, այլովիալ-դեյլովիալ առաջացումներ՝ 23600 մ³,
- Բացահանքի օտարման մակերեսը – 2,78 հա:



Բացահանքում մակաբացման ապարները՝ մինչև բացահանքի 2135 մ նիշ ունեցող հորիզոնի շահագործումը, նախատեսված է տեղադրել բացահանքի արևմտյան և հյուսիսային մասում ձևավորվող արտաքին ժամանակավոր լցակույտերում: 2135 մ նիշ ունեցող հորիզոնի շահագործմանը զուգընթաց մակաբացման ապարները նախատեսված է տեղափոխել ներբացահանքային տարածք՝ ներքին լցակույտառաջացման նպատակով: Բլոկները և խճի հումքը նախատեսված է տեղափոխել 2 կմ հեռավորության վրա գտնվող արդյունաբերական հրապարակ (պահեստ) պահեստավորման՝ սպառողի տրանսպորտային միջոցներով հետագա իրացման նպատակով: Արտադրական թափոնները և այլովիալ-դեյուվիալ ապարները նախատեսված է տեղադրել բացահանքի հյուսիսային մասում, իսկ հողաբուսական ապարները՝ բացահանքի հարավ արևմտյան մասում: Լցակույտառաջացումը կատարվում է բուլդոզերային եղանակով: Արտաքին լցակույտից մակաբացման ապարները հարթեցման/ռեկուլտիվացիայի նպատակով տեղափոխվելու են մշակված տարածություն (ներքին լցակույտ):

Արդյունահանման աշխատանքների ավարտից հետո նախատեսված է արդյունահանման հետևանքով խախտված տարածքների տեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա/վերականգնում: ՇՄԱԳ-ում ներկայացվել է այդ աշխատանքների իրականացման ծախսերի խոշորացված հաշվարկը՝ 2,33 հա ընդհանուր տարածքի համար (լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիայի համար այն գնահատվել է 2237050 դրամ):

ՇՄԱԳ հաշվետվությունում գնահատվել է արդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռեսուրսներ, մթնոլորտային օդ, կենսաբազմազանություն) և սոցիալական միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և մշակվել են միջոցառումներ՝ հնարավոր վնասակար ազդեցությունները կանխարգելելու, նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով: Նախատեսվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ, թափոնների կառավարմանն ուղղված միջոցառումներ՝ իրականացման ծախսերով և ֆինանսական միջոցների խոշորացված հաշվարկով:

Գեղարքունիքի մարզի Մարտունու բազալտի հանքավայրի արդյունահանման աշխատանքների ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննական գործընթացին մասնակցել են՝ Գեղարքունիքի մարզպետարանը, կադաստրի կոմիտեն, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, որոնց կարծիքները ևս հաշվի են առնվել փորձաքննական գործընթացում: Փորձաքննական գործընթացին մասնակցել է նաև ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության հանձնաժողովը, որի կողմից ՇՄԱԳ-ի վերաբերյալ ստացվել է կարծիք՝ բազմաթիվ դիտողություններով և առաջարկություններով, որոնք վերաբերել են ջրային ռեսուրսների (հայցվող տարածքից 0.35 կմ և 1.2 կմ հեռավորությունների վրա գտնվող Մարտունի և Արգիճի գետեր) վրա հնարավոր ռիսկերի և ազդեցությունների գնահատման աշխատանքների կամ գնահատման մոտեցումների, տարածքի հիդրոերկրաբանական պայմանների և ստորերկրյա ջրերի վերաբերյալ տեղեկատվության բացակայությանը: Ընկերության կողմից ՇՄԱԳ-ում չի հիմնավորվել հայցվող տարածքում ստորերկրյա ջրերի



առկայությունը կամ բացակայությունը և չեն ներկայացվել ջրային ռեսուրսների աղտոտման կանխարգելմանն ուղղված բավարար միջոցառումները:

Փորձաքննական հիմնավորումներ: Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներով: Փորձաքննության գործընթացում վեր են հանվել հետևյալ հիմնավորումները, որոնք հիմք են հանդիսացել եզրակացության կազմման համար.

1. Գործունեության տարածքը գտնվելով Սևանա լճի անմիջական ազդեցության գոտում, հանքավայրի արդյունահանման աշխատանքները կարող են պարունակել ջրային ռեսուրսների աղտոտման ռիսկեր: ՇՄԱԳ-ում չեն ներկայացվել բավարար հիմնավորումներ Ընկերության կողմից հայցվող տարածքից 0.35 կմ և 1.2 կմ հեռավորությունների վրա գտնվող Մարտունի և Արգիճի գետերի վրա հանքավայրի շահագործման աշխատանքների հնարավոր ազդեցությունների (աղտոտման ռիսկեր) գնահատումների և դրանց նվազեցմանն ու մեղմացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

2. 2024 թվականի մարտի 7-ին Գեղարքունիքի մարզի Մարտունու բազալտի հանքավայրի արդյունահանման աշխատանքների ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ Մարտունի խոշորացված համայնքի Գեղիովիտ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում կայացած 4-րդ հանրային քննարկման ընթացքում շահագրգիռ հանրությունը (Գեղիովիտի բնակիչներ) դեմ արտահայտվեց «ՍՄԱՌ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող արդյունահանման աշխատանքներին: Բացասական կարծիքները և մտահոգությունները կապված են եղել հարակից տարածքում առկա արոտավայրերի և արոտավայրեր տանող ճանապարհների և վերջիններիս վրա Ընկերության կողմից իրականացվող արդյունահանման աշխատանքների հնարավոր բացասական հետևանքների հետ, որոնք կարող են առաջացնել սոցիալական ռիսկեր և խոչընդոտել անասնապահությանը:

3. Գեղարքունիքի մարզի Մարտունու բազալտի հանքավայրի արդյունահանման աշխատանքների ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ փորձաքննական եզրակացության համար հիմք են հանդիսացել «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների և ՀՀ կառավարության 2002 թվականի հունվարի 24-ի թիվ 57 որոշման պահանջները և վերոնշյալ փորձաքննական հիմնավորումները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով վերը նշված փորձաքննական հիմնավորումները և առաջնորդվելով Օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով՝ Գեղարքունիքի մարզի Մարտունու բազալտի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ  Վահագն Մկրտչյան

